**GERARD DÉDÉYAN.** Les Arméniens entre Grecs, Musulmans et Croises. Etude sur les pouvoirs Arméniens dans le Proche-Orient Mediterraneen (1068-1150). Volume 1: Aux origines de l'Etat Cilicien: Philarète et les premiers Roubéniens; Volume 2: De l'Euphrate au Nil: Le reseau diasporique. Lisbonne 2003, 1511 p. (Bibliothèque arménologique de la fondation Calouste Gulbenkian).

ԺԵՐԱՐ ԴԵԴԵՅԱՆ. Հայերը հույների, մուսուլմանների և խաչակիրների միջև. հետազոտություն միջերկրածովյան Մերձավոր Արևելքի հայկական իշխանությունների (1068-1150) մասին: Հատոր Ա. Կիլիկյան պետության սկզբնավորումը. Փիլարտոսը և առաջին Ռուբինյանները: Հատոր Բ. Եփրատից մինչև Նեղոս. գաղութների ցանցը: *Լիսաբոն, 2003, 1511 էջ (Գալուստ Գյուլբենկյան մատենաշարի հայագիտական գրադարան):*

*Հրապարակված երկհատոր աշխատանքը Մոնպելիե-Գ, Պոլ Վալերի համալսարանի պրոֆ. Ժերար Դեդեյանի դոկտորական ավարտաճառն է, որը պաշտպանության է դրվել 1990 թ. ապրիլին, Փարիզի 1 (Պանթեոն-Սորբոն) համալսարանում: Գիրքը հրապարակվել է Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի հովանավորությամբ և կազմում է համանուն մատենաշարի հերթական հատորը: Հեղինակը գիրքը նվիրել է Սիրարփի Տեր-Ներսեսյանի, Կլոդ Կահենի և Ֆրեդերիկ Ֆեյդիի հիշատակին և ձոնել իր ընտանիքի անդամներին: Ժերար Դեդեյանն իր շնորհակալությունն է հայտնում համալսարանական ուսուցիչներին, Ֆրանսիայի, Հայաստանի և աշխարհի տարբեր երկրների բարեկամ հայագետներին, բյուզանդագետներին և միջնադարագետներին, որոնք աջակցել կամ իրենց խորհուրդներով օգնել են այս հսկայածավալ աշխատանքի կայացմանը (հտ. 1, էջ VII-XV): Գրքի հանձնարարականը գրել է Ինստիտուտ-կաճառի անդամ Ժան Ռիշարը, որն անդրադառնում է թեմայի կարևորությանը ԺԱ-ԺԲ դդ. Արևելյան Միջերկրականի, Բյուզանդիայի արևելյան քաղաքականության, խաչակրաց և մուսուլմանական արևելքի երկրների հետազոտության ժամանակակից խնդիրների տեսանկյունից (էջ XVII-XXI): Այնուհետև Ժ. Դեդեյանն անդրադառնում է հատուկ անունների տառադարձության խնդիրներին, գրքի համար հիմք ընդունելով* Revue des Etudes Armeniennes*-ի որդեգրած սկզբունքները (էջ XXIII-XXVI):*

*Նախաբանում մենագրության հեղինակը ներկայացնում է գրքի կառուցվածքը (էջ XXVII-XXX), իսկ առաջաբանում ընդհանուր գծերով անդրադառնում Բյուզանդական կայսրության մեջ հայկական ազնվականության խաղացած դերին, ցույց է տալիս, Արշակունիներից մինչև Բագրատունիների կործանումը, նախարարական համակարգի անցած ուղին (էջ XXXI-XLI):*

*Բուն հետազոտությունը բաղկացած է չորս մասից (էջ 1–1330), որին հետևում են գլխավոր ամփոփումը (էջ 1331–1338), մատենագիտությունը (էջ 1339–1417), ցանկերը (էջ 1419-1511), վրիպակների ցանկը, տոհմածառերը և քարտեզները: Ժ. Դեդեյանն օգտագործել է ԵՊՀ-ի պրոֆ. Բաբկեն Հարությունյանի և Վարդան Մխիթարյանի, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Կլոդ-Արմեն Մուրադյանի և Էրիկ վան Լովի կազմած քարտեզները:*

*Գրքի առաջին հատորն անվանված է Կիլիկյան պետության սկզբնավորությունը. Փիլարտոսը և առաջին Ռուբինյանները: Առաջին մասը բաժանված է չորս գլուխների (ա. Փիլարտոս Վրախամյան-Վահրամյանի ազդեցությունը և իշխանությունը, բ. Իշխանության տարածքային ձեռքբերումները և բնակչությունը, գ. Իշխանության կառուցվածքը, դ. Փիլարտոսի պատերազմները), որոնք նվիրված են Փիլարտոս Վարաժ-*

նունու հիմնադրած պետական միավորման(1072-1090) պատմությանը (էջ 5-357): Առաջին գլխում հեղինակն անդրադառնում է Փիլարտոսից առաջ Վարաժնունի-Վրախամիոս ընտանիքի անդամների հիշատակությանը դարաշրջանի կնիքների ու հայկական, բյուզանդական, արաբական պատմագրության մեջ, այնուհետև իր ուշադրությունը սևեռում է Նիկեփոր Փոկաս և Հովհաննես Զմշկիկ բյուզանդական կայսրերին ժամանակակից Սահակ Վահրամյանի (969-978) գործունեության վրա (էջ 5-17), Փիլարտոսի իշխանությունը ծնող քաղկեդոնական միջավայրին, բյուզանդական բանակում նրա ծառայությանը և մասնակցությանը Մանազկերտի ճակատամարտին (էջ 17-35): Հեղինակն անդրադառնում է 1071 թ. առաջ Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում բյուզանդական կայսրության վարած քաղաքականությանը. Անտիոքի դուքսեր Խաչատուրի և Պեխտի գործունեությանը, մինչև Մանազկերտի ճակատամարտը Կիլիկիա թափանցած հայկական տարրին և սելջուկ հրոսակներին, Բյուզանդական կայսրությանը հայերի հավատարմության խնդրին (էջ 37-46): Ժ.Դեդեյանը հայագիտության մեջ առաջին անդամ անդրադառնում է հայերի Ռոմանոս Դիոգենես կայսրին հավատարմության խնդրին, Մանազկերտի ճակատամարտից հետո Խաչատուր զորահրամանատարի և կայսեր փոխհարաբերություններին: Գլխի հաջորդ մասը նվիրելով Փիլարտոսի անկախ գործունեությանը (էջ 47-51), հեղինակն անդրադառնում է Միքայել Է-ի դեմ նրա բարձրացրած ապստամբությանը և ստեղծված քաղաքական միավորի փաստացի անկախությանը: «Փիլարտոսը տեսականորեն բյուզանդական ենթակայության ներքո» (էջ 52-61) հատվածում Ժ. Դեդեյանը քննարկում է Նիկեփոր Վոտանիատեսի հետ Փիլարտոսի համագործակցությունը, իբրև Բյուզանդական կայսրության ստորակա Ալեքս Ա Կոմնենոսի հետ նրա փոխհարաբերություններին և կարգավիճակին: «Փիլարտոսը և գործունյա մուսուլմանների գերակայությունը» (էջ 61-64) գլխում հեղինակն անդրադառնում է թյուրք-սելջուկների հարկատուն և ապա ստորական դարձած Փիլարտոսի վարքագծին: Գլխի վերջին հատվածում հեղինակը փորձում է պարզաբանել, թե արդյոք Փիլարտոսը բյուզանդական կողմնապահ է, թե՞ հայկական իշխան (էջ 65-70): Այստեղ հեղինակը կատարում է պատմագրության համար կարևոր հետևյալ եզրահանգումները՝ ըստ հայկական պատմագրական ավանդույթի, Փիլարտոսը Վարաժնունիների տոհմից է, իսկ ըստ բյուզանդականի՝ Վրախմանյանների, ԺԱ դարի սկզբին ծնվել է Մարաշի մոտակայքում, Կոստանդին Ժ Դուկասի իշխանության ժամանակ բարձրացել է զինվորական աստիճաններով, Ռոմանոս Դիոգենեսի իշխանության տարիներին դարձել է Մելիտենեի ստրատեգը և տարածաշրջանի մյուս հայազգի գործիչների (Խաչատուր, Վասիլակես, Ապոկավպներ) հետ մասնակցել Մանազկերտի ճակատամարտի պատրաստությանը, պարտությունից հետո ապստամբել է Միքայել Է-ի դեմ, իսկ ավելի ուշ՝ ընդունել Մելիք շահի գերակայությունը, Բագրատունիներից հետո առաջին անդամ փորձ կատարելով վերականգնել Հայոց պետականությունը: Այս եզրակացությունների մեջ, իհարկե, մնում են դեռևս որոշ չլուսաբանված խնդիրներ. ի՞նչ նպատակ էր հետապնդում մուսուլմանության ընդունումը Փիլարտոս Վարաժնունու կողմից, և կամ ինչու՞ է Մատթեոս Ուռհայեցին այդքան թշնամանքով արտահայտվում նրա մասին[1]:

Երկրորդ գլուխը նվիրված է Փիլարտոսի իշխանության տարածքային և էթնիկական խնդիրների լուսաբանությանը (էջ77-178): Հեղինակն անդրադառնում է Մարաշի (Գերմանիկե) տարածքում հայ բնակչության գոյության և Փիլարտոսի պետության մեջ այդ քաղաքին վերապահված «սրբավայրի» դերին, Լիկանդոսի թեմի կառավարիչ Մլեհի (1072-1085) գործունեությանը, Կապադովկիա, Մելիտենե, Կոմմագենե, Հանձիթ և Կիլիկիա գավառների ենթակայությանը Փիլարտոսի իշխանությանը և Կիպրոսի հետ ունեցած նրա փոխհարաբերություններին, Եդեսիայի նվաճմանը, Հյուսիսային Ասորիքում ծավալած նրա

[1] Տե՛ս Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 206,233-234:

գործունեությանը, Անտիոքի գուքս Վասակ Պահլավունու ճակատագրին և Փիլարտոսի կողմից Հյուսիսային Ասորիքի մայրաքաղաքի նվաճմանը (1078): Հեղինակն անդրադառնում է նաև Փիլարտոսի իշխանության մեջ ընդգրկված տարածքների ռազմական ուժին և պաշտպանվածությանը, հայ (քաղկեդոնական և հակաքաղկեդոնական), ասորի (հակոբիկ և մելքիտ), հույն, վրացի, մուսուլման և լատին բնակչության խաղացած դերին, Ժ-ԺԱ դդ. Հայաստանի և մերձակա երկրների էթնիկական և միջդավանական իրադրությանն ու տեղաշարժերին: Հիշատակված էթնոդավանական խնդիրների քննարկումը եզակի ամբողջականություն է տալիս գրախոսվող աշխատությանը, որը հավակնում է վերջին խոսք լինել հիշատակված խնդիրների հետազոտության ընագավառում:

Երրորդ գլուխը հեղինակը նվիրել է Փիլարտոսի իշխանության և բանակի կառուցվածքին (էջ 183-280): Նա այստեղ քննարկում է Փիլարտոսի իշխանության տակ անցած բյուզանդական այդ նախկին տարածքներում հայկական զինվորական ուժերի խաղացած դերը, նորմանների, ֆրանկ-խաչակիրների և մյուս եվրոպական զինվորական ուժերի ներկայությանը տարածաշրջանում, քաղկեդոնական հայերի հատկապես Ապոկավպ ընտանիքի գործունեությանը, իշխանության ֆինանսական ռեսուրսներին, Եդեսիայի և Անտիոքի քաղաքային իշխանություններին, Հակոբիկ և Հայոց առաքելական եկեղեցիների նկատմամբ Փիլարտոսի վարած երկմիտ ու երկակի քաղաքականությանը, Հայոց եկեղեցին քայքայող նրա գործունեության դեմ Գրիգոր Բ Վկայասեր և Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսների ծավալած երկարատև պայքարին, Փիլարտոսի դավանանքին և մուսուլմանություն ընդունելու հանգամանքներին: Այս հարցերի հետ զուգահեռաբար, Ժ. Դեդեյանը քննարկման նյութ է դարձնում նաև Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի գործունեությունը, քույր եկեղեցիների հետ փոխհարաբերությունները, Եդիպտոսում ծավալած եկեղեցաքաղաքական-շինարարական աշխատանքը: Հիմնական շեշտը դնելով տարածաշրջանում Հայոց եկեղեցու դերի բացահայտմանը, հեղինակը կարողանում է ամբողջականության մեջ ներկայացնել եկեղեցու և քաղաքական միավորների համագործակցությունը:

Չորրորդ գլուխը նվիրված է Փիլարտոս Վարաժնունու մղած պատերազմներին (էջ 287-357): Այստեղ հեղինակն անդրադառնում է Կասլադովկիայում և Հյուսիսային Ասորիքում հաստատված հայկական թագավորական և իշխանական ընտանիքների ներկայացուցիչների գործունեությանը, Փիլարտոսի և նրանց միջև փոխհարաբերություններին: Ժ. Դեդեյանը արծարծում է նաև հարևան մուսուլմանական քաղաքական միավորների և հատկապես Սելջուկյան Մեծ սուլթանության հետ Փիլարտոս Վարաժնունու փոխհարաբերությունները: Հայկական զինվորականության խաղացած դերը միջնադարում հայ պատմագրության բավարար ուշադրությանը չի արժանացել, այդ իսկ պատճառով կարևորվում են Ժ.Դեդեյանի մոտեցումները հիշատակված խնդիրներին:

Աշխատանքի երկրորդ մասը նվիրված է Կիլիկիայի Ռուբինյան իշխանության 1073-1145 թթ. պատմությանը և բաժանված է երեք գլուխների: Առաջին գլուխը նվիրված է Ռուբինյան իշխանության հիմնադրմանը (էջ 365-416): Հեղինակն անդրադառնում է Ռուբինյանների ծագման կնճռոտ հարցի լուսաբանմանը, ուր բյուզանդական սկզբնաղբյուրների հենքի վրա կատարում է մի քանի ենթադրություններ, Ռուբինյանների հայրենիքն է համարում Հանձիթ գավառը: Այնուհետև սկզբնաղբյուրների տեղեկությունների վրա հիմնվելով, փորձում է ապացուցել, որ Կիլիկյան իշխանության իսկական հիմնադիրը Ռուբենի որդի Կոստանդինն է: Գագիկ Բ-ի և ապա Փիլարտոսի ստորակա Ռուբենի գործունեությանն անդրադառնալուց հետո, հետազոտողը ճշտում է Կոստանդին Ա-ի (1093-1100) իշխանության տարածքը, լուսաբանում բյուզանդացիների և թյուրքերի դեմ վարած նրա պատերազմները, խաչակրաց բանակների հետ ունեցած առաջին փոխհարաբերությունները:

Կիլիկիայի հայկական իշխանության հիմնադրման պատմությունը ներկայաց-

*ված է բազմաթիվ հետազոտողների աշխատություններում: Պիտի ասել, որ Ժ.Դեդեյանի մոտեցումները նոր լույսի տակ են քննում պատմագրության առջև կանգնած բոլոր խնդիրները: Հեղինակի համար կարևոր են բոլոր կարգի սկզբնաղբյուրները, սկսած տարալեզու մատենագրական հուշարձաններից մինչև կնիքներն ու ժառանգականության ցանկերը:*

Երկրորդ գլուխը նվիրված է Թորոս Ա իշխանի (1100-1129) գործունեությանը (էջ 423-517): Ժ. Դեդեյանը համակողմանիորեն անդրադառնում է Թորոս Ա-ին միջնադարյան պատմագրության մեջ տրված անուններին ու տիտղոսներին, լատին իշխանությունների հետ նրա հաստատած ազգակցամուսնական կապերին, իր եղբայր Լևոնի հետ Կիլիկիայի ղեկավարմանը, Դեսբոլի հաշտության պայմանագրին (1108 թ.) և տարածաշրջանում ունեցած նրա դերին, իշխանության նոր մայրաքաղաք դարձած Անավարզայի նշանակությանը, Կիլիկյան դաշտավայրի նվաճմանը, եկեղեցու կողմից սրբացված զորավարների պաշտամունքին, հայկական և խաչակրաց բանակների հատուկ ջոկատների կազմակերպությանը և զինվածությանը, ասպատակություններին ու պաշարման արվեստին, Ռուբինյան առաջին դրամների բնութագրմանը, վանական աշխույժ կյանքին, Անավարզայի եկեղեցու նշանակության, Կիլիկիայի գլխավոր իշխանական տան սրբություններին: Այնուհետև խոսվում է Թորոս Ռուբինյանի բյուզանդական կայսրությանը ենթակայության աստիճանի և նրա հետ փոխհարաբերությունների, ֆրանկյան լատին իշխանությունների հետ համագործակցության, Անտիոքի իշխանության գերակայության ճանաչման և նրա նվաճողական քաղաքականության դեմ պայքարի, Սելջուկյան պետությունների դեմ մղած պայքարի մասին:*

Երրորդ գլուխը նվիրված է Լևոն Ա (1129-1137) իշխանի պետական քաղաքականության հետազոտությանը (էջ 523-637): Ժ. Դեդեյանը շարադրում է Թորոս Բ-ի մահից հետո իշխանությունը Լևոն Ա իշխանին անցնելու մութ խնդիրը, թագ ընդունած Լևոնին՝ Միքայել Իտալիկոսի երկում թշնամաբար ներկայացնելու հանգամանքները, Լևոնի ժառանգների խնդիրը, բյուզանդացիների պատժիչ ռազմարշավը (1137 թ.) և Լևոնի հետնորդների երկպառակությունը, հարևան պետությունների հետ հաստատված ամուսնական կապերը, զինվորական գործի զարգացումը Կիլիկիայի հայկական իշխանությունում, Անտիոքի դքսության, Եդեսիայի և Մարաշի կոմսությունների, Դանիշմանյան ամիրայության և Բյուզանդական կայսրության հետ ռազմաքաղաքական փոխհարաբերությունները, Հովհաննես Կոմնենոսի Կիլիկյան ռազմարշավի քաղաքական նախապատրաստությունը և արդյունքները: Հեղինակը փորձում է խորամուխ լինել այդ փոխհարաբերությունների բոլոր մանրուքների մեջ, որոնց մասին քիչ թե շատ վկայություններ են պահպանվել ժամանակաշրջանի պատմագրական հուշարձաններում: Հեղինակը փորձում է անկախ լինել իր եզրակացությունների մեջ և երբեմն շրջանցում է կարևոր երևույթներ: Այդ տեսանկյունից կարևոր ենք համարում Կիլիկիայի բյուզանդական դուքսերի գործունեությունը, որոնց անդրադարձը կօգներ ավելի ամբողջական պատկերացնել Կիլիկիայի նկատմամբ բյուզանդական հավակնությունների ողջ դաշտը:

Աշխատության երրորդ մասը նվիրված է ԺԺԲ դդ. Կիլիկիայի, Ասորիքի, Պաղեստինի և Եգիպտոսի հայկական իշխանություններին, որոնք դտնվել են օտար տիրապետությունների տակ: Առաջին գլխում (էջ 647-704) հեղինակն անդրադառնում է կապադովկյան ավատատեր, հայազգի Սիմեոնի համագործակցությանը Խաչակրաց առաջին ռազմարշավի բանակների և նրանց ղեկավարների հետ, Լամբրոնի Հեթումյան տան սկզբնավորությանը, խաչակիր նորմանների և Բյուզանդիայի հետ փոխհարաբերություններին, 1112-1143 թթ. Հեթում Բ իշխանի ենթակայությանը Բյուզանդական կայսրությանը, Լամբրոնի Օշին Բ և Պապերոնի Սմբատ Ա Հեթումյանների գործունեությանը, Տարսոնի տեր Ասպետին և նրա ընտանիքին վերաբերող վկայություններին:

Երկրորդ գլուխն անվանված է «Հայերը Կիլիկիայի նվաճման բյուզանդական քա-

զաքականությանը դեմառդեմ» (էջ 711-755): Այստեղ հեղինակն անդրադառնում է Արևելքի նկատմամբ բյուզանդական ռազմական գործողությունների ընթացքում Կիլիկիայի նշանակությանը, 1140-1143 թթ. Հովհաննես Բ Կոմնենոսի ձեռնարկած երկրորդ Կիլիկյան ռազմարշավի պատճառների և ընթացքի վերլուծությանը: Հեղինակը քայլ առ քայլ հետևում է Բալկաններում և Կիլիկիայում տեղի ունեցած ԺԱ դարի վերջի և ԺԲ դարի առաջին կեսի հայ-բյուզանդական եկեղեցական բախումներին՝ քաղկեդոնական և հակաքաղկեդոնական հայկական համայնքների մերօրյա հետազոտությունների առաջադրած խնդիրների լույսի ներքո, ԺԲ դարի առաջին կեսին Հայոց եկեղեցու առաջնորդների առջև կանգնած հիմնական հարցերին և գործունեության գնահատականին:

Երրորդ գլուխը կոչվում է «Հայերը և ֆրանկները. աղերսներ, փոխհարաբերություններ և ազդեցություններ» (էջ 761-815): Այս հատվածում հեղինակը հետազոտում է ԺԲ դարի երկրորդ կեսի Կիլիկիայում խաչակրաց բռնատիրության բոլոր ժամանակաշրջաններին և տարածաշրջանի համար հայկական իշխանության պայքարին, հասարակական կարգավիճակը բնորոշող եվրոպական և տեղական ազնվականական տիտղոսների (բարոն, կոմս, մարկիզ, դուքս, միլ, իշխան) քննությանը, վասալական փոխհարաբերություններին, Հյուսիսային Ասորիքի և Կիլիկիայի դավանական իրավիճակին և հայ-լատին եկեղեցական փոխհարաբերություններին, խաչակիրների մղած Սուրբ պատերազմի գաղափարախոսությանը, լատին եկեղեցու Նվիրապետական համակարգի նկատմամբ հայերի վերաբերմունքին, տարածաշրջանում վանական և զինվորական ասպետական կարգերի ներկայությանը, Եդեսիայի անկման դարաշրջանում կաթողիկոսարանի և պապության փոխհարաբերություններին:

Չորրորդ գլուխն անվանված է «Հայերը Ասորիքում, Պաղեստինում, Եգիպտոսում» (էջ 819-926): Այստեղ ի մի են բերվում հայ բնակչությանն առնչվող և այս ժամանակաշրջանին վերաբերող պատմական վկայությունները, որոնք վերաբերում են Ամանոսի լեռնային շրջանին, Անտիոքի իշխանության տարածքին, քաղաքային արիստոկրատիայի ներկայացուցիչ Ֆիրուզի էթնիկական ծագմանն ու գործունեությանը, անդրորոնտեսյան տարածքների (Ռուջ, Արտահ, Հարիմ, Հալեպի շրջան) հայկական բնակչության դերին, խաչակրաց Հյուսիսային Ասորիքում և Սուրբ Երկրում հայերի ռազմական ներկայությանը, անտիոքյան բանակի ռազմական ինժեներ Ավետիքի, Երուսաղեմի հայկական գաղութի, Եդեսիայի կոմսությունից Երուսաղեմի թագավորություն հայերի գաղթին, Հալեպի մոտակայքում ինքնավար հայկական զորաջոկատի գոյությանը: Հեղինակն այնուհետև անդրադառնում է մուսուլմանական Հյուսիսային Ասորիքում հաստատված հայերի էթնոդավանական խմբերին (Ցարուքթաշ եվնուխ, Արևորդիներ), որոնք հաստատված են եղել Շեյզարում, Համայում, Հավռանում: Հեղինակը նաև հատուկ քննարկման է արժանացնում Եգիպտոսի ԺԱ-ԺԲ դդ. հայազգի վեզիրներ՝ Բադր ալ-Ջամալի, Վահրամ Պահլավունու, Բանու Ռուզիկի, գործունեությունը:

Աշխատանքի չորրորդ մասը նվիրված է եփրատամերձ տարածքի հայկական իշխանություններին: Այստեղ առանձին գլուխ է նվիրված Մարաշի, Մելիտենեի և Եդեսիայի հայկական իշխանությունների պատմությանը (էջ 933-1051): Գլխում հեղինակը ներկայացնում է Հովհաննես Զմշկիկի բյուզանդական վերանվաճումից հետո տարածաշրջանում ստեղծված իրադրությունը, Մարաշի ստրատեգիական դիրքի և Ֆիլարետի իշխանության կազմում ունեցած դիրքի քննարկումը, խաչակրաց առաջին ռազմարշավից հետո Մարաշում բյուզանդացիների կողմից դուքս կարգված զորահրամանատար Թաթուլի խաչակիրների նկատմամբ առճակատումը, Դանիշմանյանների դեմ 1104 թ. պատերազմի հարցերը, Մելիտենեի իշխանության ազգային-կրոնական իրավիճակը, Գաբրիել իշխանի գործունեությունը, Դանիշմանյան ամիրայության և լատին խաչակիրների հետ փոխհարաբերությունները, Եդեսիայի բյուզանդական կառավարիչ Թորոսի ռազմաքաղաքական գործունեությունը (1094-1097):

Երկրորդ գլխում պատմվում է մերձեփրատյան տարածաշրջանի մյուս հայկական իշխանությունների, հատկապես Գող Վասիլի և Բագրատի գործունեության (էջ 1057-1174) մասին: Այստեղ հեղինակն անդրադարձ է կատարում Գող Վասիլի Քեսունում ստեղծած իշխանության նախապատմությանը, իշխանական տիրույթներին, հարևաններին, ազգային և կրոնադավանական խնդիրներին, հարևան պետություններին հետ փոխհարաբերություններին:

Ժ. Դեդեյանը քննարկում է նաև Խաչակրաց առաջին արշավանքի պատմիչներին քաջածանոթ, Գող Վասիլի եղբայր Բագրատի գործունեությունը, նրա փոխհարաբերությունները խաչակիր և սելջուկ գործիչների հետ: Պատմագրության համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև տարածաշրջանի պատմության հետազոտությունը Գող Վասիլի մահից հետո, նրա իշխանության ժառանգորդներ Տղա Վասիլի իշխանության տարիներին (1114-1116):

Այս մասի երրորդ գլուխը հեղինակը նվիրել է տարածաշրջանի Պահլավունի իշխանություններին և նրանց հարևաններին (էջ 1181-1325): Այստեղ հայագետ-բյուզանդագետ-միջնադարագետ պատմաբանն անդրադառնում է Պահլավունի նախարարական ընտանիքի ծագումնաբանությանը, Գրիգոր Մագիստրոսի գործունեությանը, Բոգուեն Բոլոնիացու ստորականեր Թլպաշարի Ֆեր և մերձեփրատյան Նիկոսուս իշխանների ճակատագրին, Ալ-Բիռայի տերեր Գուբոսի, Ապլղարիբ և Լիկոս Պահլավունիների, Եդեսիայի կոմսության հպատակ մյուս հայ ստորակաների (Կարկառի Կոստանդին և Դավթուկ Մամիկոնյանների, Միքայելի) վարքագծին: Եդեսիայի կոմսության անկումից առաջ և հետո Վասիլ Պահլավունու (1136-1150) գործունեությանը Կարկառում, նրա հայազգի և լատին ստորականերին, Տլուքի Ծովք ամրոցի տիրակալներին: Ծովք դղյակը դիտելով իբրև կաթողիկոսական նստավայր հեղինակն անդրադառնում է Անի վերադառնալու խնդրին, քննարկում է Հռոմկլայի ամրոցում կաթողիկոսների հաստատվելու և մուսուլմանական տիրապետության տակ նրանց գործառույթի պատմագիտական խնդիրները: Այստեղ Ժ. Դեդեյանն առանձին բաժիններում խոսում է Վասիլ Պահլավունու, Բանու Պողոսակի, Եդեսիայի կոմսության իշխանության տակ գործող հայկական գորաջոկատի, Հյուսիսային Միջագետքի և Սասունի Թոռնիկյան հայկական իշխանությունների գործունեության մասին:

Ընդհանուր ամփոփումից հետո (էջ 1331-1338) հեղինակը բերում է հիմնական հապավումները, սկզբնաղբյուրների և գրականության ցանկը (էջ1331-1417), միջնադարյան հեղինակների և նրանց երկերի, անձնանունների, ֆեոդալական ընտանիքների և հարստությունների, ժողովուրդների, ցեղերի և էթնիկական խմբերի, տեղանունների ցանկերը (էջ 1419-1511): Բովանդակությունից հետո բերվում են նկատված վրիպակները, Արծրունիների, Բագրատունիների, Պահլավունիների, Ռուբինյանների տոհմածառերը: Գրքի հետ պատրաստված է նաև տարածաշրջանը ներկայացնող չորս քարտեզ:

Ինչպես նկատվեց, Ժ.Դեդեյանի մենագրությունը Մերձավոր Արևելքի հայկական իշխանությունների պատմությունը ներկայացնում է համաշխարհային պատմության լայն ետնախորքի վրա: Աշխատանքում լայնորեն օգտագործված են հայերեն, հունարեն, լատիներեն, ասորորեն և արաբերեն լեզուներով գրված մատենագրական հուշարձանները: Իհարկե, նման խնդիր իրականացնելու ճանապարհին, ֆրանսիական պատմագրությունն անցել է բավական երկար հետազոտական ուղի: Արդեն Վիկտոր Լանգլուայի և Էդուարդ Դյուլորիեի աշխատություններում առկա են այս շրջանի հայոց պատմության խնդիրների արծարծման հիմնական մոտեցումները, որոնց խորացմանն իր աշխատություններում նպաստել է Կլոդ Կահենը, որի հետևորդն է իրեն, արդարև, համարում Ժ. Դեդեյանը:

Ժ.Դեդեյանի հիմնական խնդիրն է ստեղծել ԺԱ-ԺԲ դդ. հայկական զինվորական ուժերի տեղաբաշխման և տարածման պատկերը, միջազգային բյուզանդագիտության և եվրոպական միջնադարագիտության լույսի ներքո լուսաբանել տարա-

ծաշրջանի քաղաքական զարգացումների հիմնական ուղղությունները, միջնադարյան Եվրոպայի և խաչակրության պատմության հետազոտություններին հետևելով ցույց տալ հայկական իշխանությունների դերն ու կշիռը մերձավորարևելյան քաղաքական համապատկերում: Հեղինակը գրքի զանազան հատվածներում հաճախ անդրադառնում է Մեծ Հայքից բնակչության արտագաղթի հարցերին, փորձում է սահմանել այն ծնող պատճառները, դրանց մեջ հատկապես մատնանշելով Բյուզանդական կայսրության ներքին քաղաքականությունը և սելջուկյան նվաճումները: Հեղինակը փորձում է վերականգնել քաղաքական և մշակութային այն կառույցները, որոնք թույլ էին տալիս հայկական ազգաբնակչությանը պետականության չգոյության պայմաններում առաջնորդել ժողովրդին, հետևել Մերձավոր Արևելքի տարբեր անկյուններում հաստատված գաղթականության կառույցների գործունեությունը: Այստեղ հեղինակի համար կարևոր նշանակություն է ստանում Հայոց եկեղեցու դերի ու նշանակության բացահայտումը՝ իբրև հայկական գաղութների գոյությունը կարգավորող ինստիտուտ:

Հեղինակը փորձում է նաև բացահայտել երևույթներ, որոնք այդքան հեշտ չեն ենթարկվում պատմագիտության որդեգրած կանոններին և իրենց մեջ ունեն բացառություն լինելու դրոշմ: Այս տեսանկյունից բնորոշ է, որ Ժ.Դեդեյանն ընդգծում է լատինացած, հունացած, արաբացված և թյուրքացած հայկական վերնախավի խաղացած գերը տարածաշրջանում: Նա հետաքրքիր մեթոդաբանություն է կիրառում ճշտելու համար պատմական անձնավորությունների ծագումը (էջ 867-839): Հաճախ փորձում է ճշգրտել պատմագրության մեջ օգտագործվող եզրերը. օրինակ՝ Հալեպի աթաբեգությունն անվանում է թաղավորություն (տե՛ս էջ 871, 879): Գրքում քննարկված հարցերն այնքան բազմազան են, որ պահանջում են միջնադարագետների, արևելագետների, բյուզանդագետների և հայագետների նոր սերնդի կողմից ուշադրության արժանացած հարցերի ու մոտեցումների ավելի կոնկրետ ու բազմակողմանի երևակումներ: Հայագիտության մեջ այս հետազոտությունն իր արժանի տեղը կարող է զբաղեցնել Նիկոզայոս Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մենագրության կողքին, իբրև ԺԲ դարի Հայաստանի պատմությանը նվիրված բազմակողմանի հետազոտություն:

Ժ. Դեդեյանի գիրքը գրված է իր քննարկած հարցերին նվիրված սկզբնաղբյուրների լայն հենքի վրա, օգտագործված են հետազոտված հարցի շուրջ գրված գրեթե բոլոր լեզուներով հետազոտությունները: Հեղինակի հետաքրքրությունները քաղաքական պատմությունից նրան տարել են էթնիկական, դավանաբանական, եկեղեցադիտական, աշխարհագրական, կնքագիտական ժամանակակից հետազոտությունների բավական լայն ոլորտ: Հայագիտության համար չափազանց կարևորվում է ներկա աշխատանքի թարգմանությունը հայերեն: Նոր հաջողություններ մաղթենք Ժ. Դեդեյանին և սպասենք նրա իսկ ղեկավարած դպրոցի նոր հրատարակություններին:

ԱԶԱՏ ԲՈՋՈՅԱՆ